

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ: Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Օտարաբարացիքը դիմում են ուղղակի Կապիտուլացի Պեդակուսի «Մուսակ»:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Շուշուց: Նամակ Նուխուց: Նամակ Նրեանից: Նամակ Արդուի-նից: Հրաւեր: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Իմ նկատողութիւններէն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՈՒՇՈՒՑ

Մարտի 10-ին

Երկար տարիներէն ի վեր ծանօթ լինելով դա- նազան օտարազգեայ քրտնիւնների հետ, ոչ մէկի մէջ մինչև այժմ չենք սեւել այն, ինչ տեսնում ենք բացառապէս հայ քրտնիւններում: Գրականու- թիւնը առանց սթիլիստիկայի, առանց մաքրի հա- կատութեան անկարող է ապրել. եթէ բոլոր քր- տնիւնները համարիւն ընթանային ամեն մի դէպ- քում, այն ժամանակ նրանք չէին կարողանայ բազմակողմանի լինել, չէին կարող լարձրացած հարցի բոլոր կողմերը զննել, չունենալով յայտ- նած մտքերի դէմ հակառակ մտքեր: Պէտքիկան, բանականութիւնը անհրաժեշտ է մատուցի համար, և ա- ռանց դրան մատուց չը կայ ազգերի մէջ: Ամեն տեղ ընդունված է, ինչպէս այդ պահանջում է և ազնուութիւնը, խօսքերին պատասխանել խօսքե- րով, համոզմունքները հերքել համոզմունքներով և այսպիսի դէպքերում գրողի անձնատրու- թիւնը, նրա ծագումը կամ ապրուստի եղանակը ոչինչ մի նշանակութիւն չէ կարող ունենալ, քանի որ չէ կարելի ասել, թէ մարդ իր հարցի շարքի հա- մեմատ է խօսում: Սակայն մեր մէջ այս կանոնը չը կայ: Եթէ մէկը գրում է մի բան, գուցէ խիստ յարձակողական ոճով (այդ նրա ճաշակն է), խօսում է այնպիսի բաների մասին, որոնք կարող են հերքել միայն համոզմունքով և փաստերով, յայտնվում են այնպիսի մարդիկ, փոխանակ այս կերպ պատասխանելու, յայտ- նում են թէ գրողը այս մարդն է, այսպէս է ապրում, ունի այսպիսի հասակ և այլն: Այս բա- նը միայն մեղանում ենք տեսնում, մեր գրակա- նութեան մէջ. դա էլ մի անհասկ հայկական ուղ- ղութիւն է: Գրականութիւնը ունի իր յատուկ կանոնները, որոնց դէմ մտղանդոններին անըա- բելիւղճ են համարում: Եւ այդ կանոնները

յարգելու ու ճանաչելու ընդունակութիւն չունե- ցող մեր ազգային քրտնիւնները այսօր առանց ա- մօթի, պատուի ու ազնուութեան նշանի կամենում են հրապարակի մէջ վերցնել այն դիմակը, որի տակ գրականական օրէնքներով իրաւունք ունի ծածկվել ամեն մէկը: Այնքալ տարի այս առի- թով վիճարկութիւններ կային «Մշակի»- և «Մի- դու» մէջ, քանի որ վերջինս կառավարում էր պ. Սպանդարեանը: Այս տարի էլ, և գուցէ այ- սուհետեւ միշտ պէտք է նոյնը կարող խըմ- բագրին, որ անբարոյականութիւն է թղթա- կիցները և աշխատակիցները անձնատրու- թիւնը մերկայանելը, հասարակութեան մասնելը, նը- կարագրելով որ և է անձ վատ դոյներով: «Մատ- նութիւն» բառից գատ ուրիշ խօսք չենք գտնում այս բանի համար: գործ ածելու, մանաւանդ որ այդպիսի ժամանակները գործադրվում են այն- պիսի միջոցներով, որ իսկապէս զգուշել են: Կը հասկանայ արդեօք խմբագրի սուրբ պաշտօն վա- ընդհանուր ազգերի մէջ ընդունված գրականական սովորութիւնները ու կանոնները—այդ մեզ հա- մար մի և նոյն է, քանի որ մենք երբէք չենք վախենում նրա ընդունած քրտնիւնների դերից, թէպէտ այդ դերում այս անգամ նա շատ ան- շնորք է գտնվել: Պարզեք մեր խօսքերը: «Մշա- կի» № 46-ի մէջ տպվել էր իմ յօդուածը «Նկա- տողութիւններ» վերնագրով: այդտեղ ես, որքան կարողացել էի, յայտնել էի իմ մտքը մի հարցի վե- ռաբեմամբ: «Նոր-Վարին» մտում էր կամ լրովին հերքել իմ յայտնած մտքերը, կամ համարելով յօ- դուածս ուշադրութեան անարժան մի բան, լռել նրա մասին: Այս են տպարակայն կանոնները, սովորութիւնները: Բայց ինչ: Օրինակ ես յայտ- նած էի, թէ «Նոր-Վարին» մտքերը ծուռ են այդ հարցի վերաբերմամբ, և ահա, ինչպէս պատաս- խան դրան, այսօր մի ինչ որ «Նոր-Վարին» ասում է, որ ես հեռագրատան մէջ ծառայող մի որ եմ, տղէտ, անկիրթ մի տղայ եմ: Ահ մի պատաս- խան, որ ստեղծել է պ. Սպանդարեան: Որքան «Նոր-Վարող» անշնորք է համոզմունքի սրբու- թեան, խօսքի իրաւունքի մասին նախա- գիտելը ունենալուց, այնքան էլ (դեռ շատ աւե- լի) անշնորք է քրտնիւնեան, կամ գուցէ դուշա- կութիւնների մէջ: Ես թէպէտ հեռագրատան ծա- ռայող չեմ, բայց պատրաստ կը լինի այնտեղ մտնել ծառայութեան, եթէ միայն «Նոր-Վարող» կարողանայ համոզանել բոլորին, թէ հեռագրատան, դատա- անում դէպի վերջինը քարվանսարան: Մի օր մտնում եմ քարվանսարան, տեսնում եմ որ նրա «գլխանը» դարձել է պատկերների մի ամբողջ գալլէ- րէա, —ամենափայլուն գոյններով նկարված և պա- տերին խիստ պատկերները գրաւում են անցու- դարձ անողների ուշադրութիւնը. երբ ես ես հե- տաքրքրված ուզում էի մտնել պատկերներին, տեսնեմ մէկը կանչելով «գնաց, չի մնաց, այս իմ պատկերները» մտնում է դէպի ինձ: Սա միջանա- սակ մի երկտասարդ էր. նրա մեծ մեծ թուխ աչ- քերի մէջ շողողող փայլը ցոյց էր տալիս նրա հոգեկան հիւանդութիւնը, իսկ նրա շրթունքների ծաղկաձը արտայայտում էր արհամարհանք դէպի ունայն աշխարհ:

րանի, խանութում, տպարանում ծառայողները անկարող են համոզմունք ունենալ, անկարող են դատել մի բանի վրա: Ես նոյնպէս պատրաստ կը լինի տղայութեան անունը ինձ վրա ընդունել, եթէ պարտը կարողանար ինձ հաւատացնել, թէ ստու է այն, որ ասում են, թէ այժմեան ժա- մանակ ճշմարտութիւնը, արդարագատութիւնը, անկեղծութիւնը դարձրել են իրանց երեսները մեծ, ուսեալ ձևացող, եթէներող երկնքում երևակայող մարդկանցից, և այնպիսի մարդ- կանցից, որոնցից մէկն է և ինքը «Նոր-Վար- ող»: Այստեղ մի համեստ հարց ենք առա- ջարկում. հին է աւելի լաւ.—ինչև տղայ, աղ- քատ, անկիրթ, բայց ունենալ հաստատակամու- թիւն, ազնուութիւն, ճշմարտասիրութիւն, անկեղ- ծութիւն.—թէ լինել ինտելլիգենտ, բարձրագոյն ուսում ստացած, և երէկ գոչել թէ կաթողիկոս- ների կենսագրութիւններ գրելը վատ է, տնաքանդ կառավարան, իսկ այսօր Մուրադեան սրբազանին առաջ բերել դեղեցիկ նկարագրութիւններով: «Նոր-Վարող» այնպէս է ենթադրել, որ իբրև թէ ես կը վախենամ իմ անձնատրութիւնը յայտնվե- լուց: Եթէ ես վախեալ ընդունակութիւն ունենա- լի, կը վախեի ոչ թէ «Նոր-Վարող» պէս մի անշնորք քրտնիւն: Խորհուրդ կը տայի պ. Սպանդարեանցին հակա- ցնել «Նոր-Վարողին», որ թիֆլիսից այստեղ շատ ան- յարմար է քրտնիւնի անելը, որ թէպէտ խմբագ- րութեան մէջ կարելի է լինեն տեղեկութիւններ «Մշակ»-ի ամեն մի թղթակցի, աշխատակցի անձ- նագրութեան մասին, բայց այդ տեղեկութիւննե- րը կարող են սխալ լինել. բայց խմբագրութեան հետախուզական մասերը աւելի լաւագինու հա- մար հարկաւոր էր «Նոր-Վարողին» ուղարկել այստեղ, Շուշու, ինչպէս ազնու, որին յանձնված է անկա- նիւնում անձնատրութիւններ որոնել և գուցէ այն ժամանակ «Նոր-Վարող» գտնէր ինձ դեղատան մէջ ծառայող պատմութեան:

անձանց վկայութեամբ կարող եմ ապացուցանել, որ «Մշակ»-ի № 30-ը (փետրվարի 24-ից) որի մէջ տպված է իմ «Նկատողութիւններ» յօդուածը, որի մասին «Նոր-Վարող» ասում է, թէ համարէն շուշուցից զգուշել են նրանից, ստացվել է փաստով Շուշուում չորեքշաբթի, փետրվարի 29-ին ժամը երկուսին կէսօրից յետոյ, ուրեմն «Նոր-Վարող» (եթէ հաշվենք Շուշուում ապրող) ամսի 27-ին չէր կա- ռող իմանալ իմ յօդուածի մասին. և ուրեմն դեռ Շուշուում չը ստացված «Մշակ»-ի այդ համարը, «Նոր-Վար»-ի մէջ արդէն տպվելիս է եղել յիշեալ թղթակցութիւնը իմ դէմ: 2. Թղթակցութիւնը գը- բած լինելով փետրվարի 27-ին, այստեղից փոս- տով պիտի ճանապարհ: ընկնէր դէպի Թիֆլիս 29-ին, որովհետև փետրվարի 27, 28-ին (երկու- շաբթի, երեքշաբթի) այստեղից փոստ չէ գնում մի տեղ, ուրեմն դեռ այստեղից փոստը ճանապարհ չընկած «Նոր-Վար»-ի գրաչարը թիֆլիսում շա- բուած էր յօդուածը փետրվարի 29-ին (Մարտի մէ- կի համարում): Հայտնվում այս կերպ, դուրս է գա- լիս, որ «Նոր-Վարող» երկրորդ թղթակցութիւնը (մարտի 2-ի համարում) չէր կարող մարտի 1-ին թիֆլիսում լինել: Այստեղից պարզադոյնից պարզ է, որ «Նոր-Վարող» այնտեղ թիֆլիսում, պ. Սպան- դարեանի խմբագրատանն է ապրում, և ոչ երբէք Շուշուում: Ինչ հիանալի ազնուութիւն. մենք էլ պիտի սովորենք այդքան ազնու լինել: Պ. Սպան- դարեանի գրատետրին վրա յօդուած է յօդուածը շուշուցիցի անագին բազմութեան բերանից, որ բարբառում է, թէ իբր Շուշու ամբողջ հայ հա- տարակութիւնը համարում է, պաշտում է նրան, և երևակայական զառանցման մէջ նա դեռ իր պատասխաններում չորհակալութիւն է յայտ- նում շուշուցի ինտելլիգենտ օրիորդներին և տիկնե- ներին: Գոնէ այնքան շնորք ունեցէք, որ հասկա- նաք, որ Շուշուում ոչ թէ չը կայ ինտելլիգենտ կանացի դաս, այլ և գրագետ տիկնիւններն պէտք է մատնեղով համարել... Եւ դեռ ասում են, թէ Գօն-Քիչոս տիպը հայերի մէջ չը կայ... Այսպէս էին համարում «Նոր-Վար»-ին և ուրիշ տեղերից... Այլ ես չեմ կարող բան ասել. միայն շատ խնդրում եմ ընթերցողին մի անգամ էլ կարդալ «Նոր-Վար»- ի յօդուածը, իմանալ որ նրա ամեն մի տառը կեղծ, չինծու է, յօդուած խմբագրութեան մէջ և յետոյ ըստ այնու դատել:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԻՄ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(Ճողովդական նկարիչ)

Էջմիածնի վանքի մի կողմում բարձրանում է Գէորգեան ճեմարանը, իսկ միւս կողմում տարած- ված է վանքին պատկանեալ մի յարկանի ընդար- ձակ քարվանսարան. անկասկած այս երկրորդ հայկական ճեմարանը կարող է պարծնեալ Գէոր- գեանի առաջ, որովհետև նրա տուած ուսումը ա- լելի հիմնաւոր է, աւելի կենսական է, նրա պատ- գամները քարվանսարայի իւրաքանչիւր աշա- կերտ ամենայն ճշտութեամբ կատարում է իրան առօրեայ կենսութեան և առհասարակ պէտք է ա- սել որ բոլոր բազարները և քարվանսար- անները բազարներ են այս կողմից: Արեւելքը ուսումնասիրելու համար՝ բազարը, քարվանսարան մի առանձին յարմարութիւն են ներկայացնում: Ընտանեկան շրջանի մէջ փակված, հասարակա- կան կենսից զուրկ ասիացիներ դուրս է հանում բազար իր մտաւոր զարգացման և արհեստաղի- նեց նա,—հատը չորս կօպէկ, հինգ կօպէկ կառ- նեն, կը տանն իրանց զիւղերը. հրամանքս, ս. Էջմիածնի տաճարը շատ կը ծախվի, հատը եթէ կօպէկ (եթէ կօպէկը այնպէս արտասանեց, որ ինձ

անում դէպի վերջինը քարվանսարան: Մի օր մտնում եմ քարվանսարան, տեսնում եմ որ նրա «գլխանը» դարձել է պատկերների մի ամբողջ գալլէ- րէա, —ամենափայլուն գոյններով նկարված և պա- տերին խիստ պատկերները գրաւում են անցու- դարձ անողների ուշադրութիւնը. երբ ես ես հե- տաքրքրված ուզում էի մտնել պատկերներին, տեսնեմ մէկը կանչելով «գնաց, չի մնաց, այս իմ պատկերները» մտնում է դէպի ինձ: Սա միջանա- սակ մի երկտասարդ էր. նրա մեծ մեծ թուխ աչ- քերի մէջ շողողող փայլը ցոյց էր տալիս նրա հոգեկան հիւանդութիւնը, իսկ նրա շրթունքների ծաղկաձը արտայայտում էր արհամարհանք դէպի ունայն աշխարհ:

գարմանցի դնի մեծութեամբ. ես ի հարկէ շտապե- ցի գարմանալ), միւս անգամ պէտք է շատ նկա- ռում ս. Էջմիածնի, մուշտարի շատ կայ, հրաման- քս, դէպ պէտք է աշխատենք որ «մասնաւոր» կա- ուավարվենք. բազ, հող չունենք. հայրս գնաց Ե- րևան այնտեղ մտաւ, բոլոր ունեցած չունեցածս էլ կորաւ, հիմա «մասնաւոր» կառավարվում ենք գերեզմանաքարեր գրելով պատկերներ քաշելով. գերեզմանաքարեր լնա կը փորեմ, հրամանքս, երբ գերեզմանաքարեր լնա կը փորեմ, հրամանքս: «Շրտանքս» նրա սիրելի բառն էր, որը արտասանելու ժամանակ բացում էր իմ մեծ փայլուն աչքերը, իսկ գլուխը թիկում էր դէպի կողմը: Երբ գերեզմանական բանաստեղծի փխուր պարագմունքը հակադրել էր նրան «աշխարհի ունայնութիւնը» և դրել էր դէպի աշխարհ:

ընչ նկարիչը Գեօրգի թղթերի և լեարդի տեղ: «Սա էլ Աջըր Դարբին է և Շահանեսանը», ա- ռաջինը թառ է ածում, իսկ գեղեցիկահին պարում է նրա առաջ, ծածանելով ձեռքին թաշկինակնե- րը, որոնց դարձեալ նկարիչը երկու մեծ կարմիր տաքտեղի ձեռք է նկարել: Սրանցից հեռու պա- րում են գուարձանում Շահ-Դամայէլը և մի ինչ որ գէօ գալ. յետոյ գալիս է օխտը զլխանի Գեօրը, որի վրա նստած է «Գիւնեա գեօղեալին», «վեց ոտանի ձիւարը» կարել է Գեօրի երկու գլուխը, ուղում է աղաթել Գիւնեան և գեօ գալին. սա էլ «բունար է», բացատրում է նկարիչը, ցոյց տալով շղթայակալ բանաստեղծին, որի առաջից և ետևից գնում են մի մի դիմաւոր: Թողնելով ա- ընելեան բանաստեղծական հերոսների պատկեր- ները, անցանք կրօնական բովանդակութիւն ու- նեցող պատկերներին.—մի տեղ ս. Գէորդը «ելա- թի» վրա նստած «մզրաղը» կոխել է «վիշապի» բերանը. միւս տեղ հայր Արքայաւոր չղքած խա- հակի «գեօշին» ուղում է մորթիլ նրան, խոյը կանգնած մեծ բաւականութիւն է յայտնում ընկե- լու հայր Արքայաւորի դանակի տակ: Հուլիսիմէ կոյսը խաչը ձեռքին կանգնած է, նրա երեսի մի կողմ սաստիկ ուսած է, նրա գըլ- լին պակ բունող հրեշտակի ոտերին նկարիչը «խանջալի» ձև է տուել, իսկ «բերեալաներն» (ճամբը) կողորակացրել, դրել է ականջների վրա: Մնացեալ պատկերներն էլ նայելով, նկատելի որ

ՆԱՍՏԱԿ ՆՈՒՈՒՆՑ

Մարտի 1-ին

Մինք ցարդ բաղդ չունեցանք տեսնել Վշակի լրագրի անցեալ տարվայ օգոստոս ամսվայ համարները (չեմ յիշում որ համարումը) մէկի մէջ տուած խոստումը, այն է, թէ վարչութիւնը ինչպէս գործարկեց անցեալ ամառը: Նուրի քաղաքում տուած ներկայացումներից գոյացած 260 ռուբլու արդքան երկար լուսովիւնը շարժեց մեր հետաքրքրութիւնը մասնաւոր իրազով տեղեկութիւն ստանալ և ի գիտութիւն հասարակութեան մի քանի խօսք ասել այդ մասին:

Ինչպէս ամենայն տեղ, նոյնպէս և Նուրի քաղաքում, կան շատ չքատու ընտանիքներ, որոնք մեծ դժուարութիւններ են կրում կամ բոլորովին դուրս են լինում դեղորայք գտնելու միջոցից իրանց ընտանիքում պատահած հիւանդին աուղջանցնելու համար: Այսպիսիք թէև դիմում են բժշկներին, բայց դժբաղդաբար, շատ անգամ վերջինների տուած խորհուրդը անկատար է մնում հէնց յիշած պատճառովը: Կանայքս լինում են այնպիսի հիւանդներ չքատու ընտանիքի մէջ, որ անկարելի է լինում հիւանդին յաջող դրուելուն մէջ դնել աուղջանգահան կանոնները ճիշդ պահպանելու դիտարկութեամբ: Որպէս զի ըստ չափու կարողութեան հնարաւոր լինի այս չարեաց առաջն առնելու, վարչութիւնը 260 ռուբլին սեպտեմբեր ամսվայ սկզբներում որոշում է գործարկել դեղորայք գնելու քաղաքի աղքատ հիւանդների բժշկութեան համար և այս մասին յայտնում է դիտարկան բժիշկ պ. Պավելիցին, որ նա իր բեցեպաներովը ձրի բաց թողնի այդ դեղատնից դեղորայք և հաշով հասանելիքը ստանայ գանձապահ Մ. Ե.—ից: Պէտք է խոստովանել, որ պ. Պավելիցին այս մասին եւ գործ է դնում իր աշխատանքը ձրիաբար բժշկել և խնդրում է դեղատնից Գոթկարայից 20% էփան բաց թողնել դեղորայքը և նա սիրով ընդունում է այս առաջարկութիւնը: Նմանապէս խնդրում է, որ եթէ հարկը պահանջէ, անպաշտպան հիւանդը կարող է տեղիս կանանդի հիւանդանոցում ընդունվել, որի համար օրական մի ռուբլի կը վճարվի: Ի հարկէ 260 ռուբլին այսպիսի եւ ասիական գործի համար շատ չնչին գումար է, և ստանալով զգալի օգուտ բերելի է կարելի, բայց որպէս մի բարի սկզբունք խրատուանելու արժանի է և հասարակութիւնը պարտական է այս սկզբունքին ազատ ընթացք տալու:

Տեղ. Վ. Խ.

ՆԱՍՏԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Մարտի 11-ին

Այսօր Երևանայ թեմի պատգամաւորները, թիւով 44 հոգի, ժողովելով առաջնորդարանում, ս. Սուրբնիանցի Նախագահութեամբ, թեմի կողմից կաթողիկոսական ընտրութեան համար պատգամաւոր ընտրեց, ձայների բացարձակ առաւելութեամբ, Վահրաման-աղա Մելիք-Արամյանցին և կանոնադատ պ. Ռուբէն-Չալալեանցին: Սրբազան Նախագահը մի կարծ և շատ խոստովանելով ընտրութեամբ ընտրեց ժողովը, յայտնելով որ ոչ մի ազդ չունի մեր ազգային եկեղեցու ընտրական սկզբունքը և որովհետև ժողովուրդն է ընտրում իր հոգևոր տիրոջը, եթէ այդ տէրը համապատասխան չը լինի ժողովրդի անկեղծութիւններին մեղաւոր և պատասխանատու կը լինի նորան ընտրողները, ուստի ընտրեցէք, ասաց, այնպիսի մի մարդ, որ ձայն տայ ձեր ցանկացած մարդու:

Պատգամաւորների ընտրութիւնը վերջնապէս յետոյ՝ Ալեքսանդրապոլի, Բայազետի, Աղուծի և ուրիշ շատ գաւառների պատգամաւորները յայտնեցին, որ իրանց ընտրողները յանձնարարութիւն ունեն յայտնելու թէ նորանց ցանկացած կաթողիկոսացուն է Ներսէս պատրիարքը: Բոլոր ժողովականների ցանկութիւնն էլ այդ էր, և եղան պահանջողներ, որ առանձին արձանագրութիւն կայանայ և պատրիարքի պատգամաւորին, որ ընտրութեան ժամանակ անպատճառ յօգուտ Ներսէսի ձայն տայ, բայց այդ առաջարկութիւնը չընդունվեց, ի նկատի ունենալով որ եթէ պ. պատգամաւորը համակարծիք չը լինի ժողովին, կը հրաժարվի ընդունել այդ պաշտօնը: Ս. Բ. Ն.

մեր նկարիչը աւելի սիրում է կրօնական և արևելեան բանաստեղծական նկարները, բայց պէտք է ասել, որ նրա նկարչութեան արհեստը գտնվում է ամենաստոր աստիճանի վրա: Ի հարկէ անտեղի է ջննել այն, ինչ որ տարրական գիտելիքներից դուրս լինի պտուղ է, այստեղ աւելի հետաքրքրելի է այն հասարակական պահանջը, որը լրացնելու համար վերադառնալ պատկերները հանդէս են դուրս գալիս: Որքան էլ ժողովուրդը ճնշված լինի նկարչական հոգեւոր ծանրութեան տակ, դարձեալ նա ձգտում է արտայայտել իր էստետիկական պիտոյնները, զգացմունքները իր կրօնի, բնաստեղծութեան, բնակարանների, հագուստների և սովորութիւնների մէջ: Ինչպէս լուսաւորված հասարակութիւնը շտապում է գլուխը հանալու տաղանդաւոր նկարչի վրձնի ստեղծագործութիւնները, քանի որ արտաքին խաղով նոյնպէս ամբողջ վարում է չթմառայալ անկող իր սիրելի հերոսների պատկերները, նրանց քաջագործութիւնները, — գլուխը հանալու իր սիրելի աշուղների երգերով: Ամբողջ ևս ձգտում է կշտացնել իր դէպի զգեցողիքը ունեցած սիրելի ծարաւը համեմատ իր հոգեկան զարգացման. անկարելի է անտարբեր մնալ դէպի ամբողջ հոգեկան պիտոյնները: Որքան անհրաժեշտ է ժողովրդական գրքերի հրատարակութիւնը, գրքէջ աւելի և անհրաժեշտ է ժողովրդական պատկերների հրատարակութիւնը, նրանք կը զարգացնեն ժողովրդի էստետիկական ճաշակը, կը վառեն նրա սրտի մէջ մարդասիրու-

թեան ընդամենը 310 ռուբլի: Այս գումարից արդէն դեղորայքի համար գործարկել է 7 ռ. 90 կոպէկ, մնացեալը մնում է մինչև միւս անգամ պահանջելը: Մեծապէս շնորհակալութիւն յայտնելով պ. պոլիովիցի Չալալեանին, մենք ներում ենք մեզ մի համեստ նկատողութիւն տանել: Քաղաքի գանձարանից 100 ռուբլի նշանակված է քաղաքային բժշկին, որ ձրի դեղորայք բաժանի աղքատ ընտանիքներին. արդեօք, եթէ 100 ռուբլին վերջնայ, քաղաքի բժիշկը ևս իրաւունք ունի դիմելու վարչութեան օգնութեանը թէ ոչ, կամ թէ վարչութիւնը այս մասին քաղաքի բժշկին ծանուցում է տուել թէ ոչ, եթէ ոչ վարչութիւնը ինչոյ ստիպված է արել այդ բացառութիւնը: Այս հարցի պատասխանը թողնելով յարգելի վարչութեանը, առ այժմ պարտք եմ համարում յայտնել հասարակութեան չքատու ընտանեաց, որ նրանք հարկաւոր ժամանակ կարող են դիմել երկու բժիշկներին դեղորայք գնելու համար, քաղաքային բժիշկը այս դէպքում կարող է օգուտ հասցնել, քանի որ վերջնայ չի լինի 100 ռուբլին, իսկ վերջնային բժիշկը վարչութեան միջոցներով:

Ս. Բ. Ն.

հրաշալի տեսարանով, ուղղել էր իր հայեացքը դէպի հեռուստ արբերի գագաթները:

— Ծախցնիք պատկերները, հետաքրքրվեցի ես: — Ինչպէս է, զիլազիլը սաղ առան, տարան, ս. էլ միմիջին տաճարը շատ են ուղուս: — Երբ ես անկարելից նրա ձեռքերի վարժապետի մօտ նրկարչութիւն սովորում հանդիմանելի վրա, ես մի վոքք կողք դիւր բռնելով պատկեր իր տխուր պատմութիւնը. իւրաքանչիւր նախադասութիւնից յետոյ, հայեացք էր ձգում դէպի հեռու բարձրութիւն, կարծես սպասում էր, որ իր խօսքերը այնտեղից վաւերացնեն:

«Գէ Աստուծոյ դէմ գանգատ անելը մեղք է, հրամանաւոր. նա մեր ամեններին անաչառ դատաւորն է, նա ամեն մի մարդու մի պատիւ է կարգել, հրամանաւոր. մենք էլ պէտք է համբերութեամբ տանենք նրա կարգած պատիւները, հրամանաւոր. հեռու ձեզանից, Աստուած ինձ էլ մի դժուար պատիւ է կարգել, — երբ լուսինը նորվում է, ես ըսելուս ամ էլ ինքս ինձ խօսել, անտեղի, իլուր, հրամանաւոր. ես էլ հասկանում եմ իմ ցաւ և միշտ հեռանում եմ մարդկանցից, մտնում եմ մի անկիւն, մի մութ տեղ, որ չը տեսնեն իմ պատիւը: Ի հարկէ լաւ է որ տեսնեն, մի օր երբ Աստուծոյ պատիւը գալիս է զլինիս, չեմ իմանում ինչպէս է լինում, որ ընկնում եմ վարժապետի աչքով, հրամանաւոր. նա հէնց որ տեսնում է թէ ես այլ և այլ բաներ եմ խօսում, աստիկ բարկանում է, սկսում է հայցոյել, խայտառակել, հրամանաւոր.

ՆԱՍՏԱԿ ԱՐԴՈՒՆԻՑ

Մարտի 8-ին

Այս օրակիս Արդուինի միջնորդը պատած, պաշարած է թանձր ձեռն խաւերով: Բարդ-բարդ ձեռն ներքև հետդեմէ անցյալստանում են գետինը, տանիքները: Այսօր ձմրան վերջին օրն է և գուցէ նա այդ պատճառով է թափում իր յետին սասուկութիւնը: Փողոցներում ոչ մի շունչ չէ երևում: Ոչ ոք չէ համարձակվում տանից դուրս գալ: Չմեռը այս տարի աստիկ էր, երկարադրծները յոյս են դնում յաջող հունձքի վրա, եթէ այդ սասուկութիւնը չը շարունակէ նաև դարձան, ինչպէս պատահեցաւ մի տարի:

Անցեալ օր բռնկեցաւ մի նշանաւոր աւազակ, որ սարսափելի մէջ էր ձգել ամբողջ գաւառը: Սա Արդուինի մերձակայ թուրք գիւղի բնակիչ Սըբէր էր: Սա իր սպանութեանց առաջին փորձը կատարեց իր գիւղացի մի մարդասպանի վրա: Գուցէ ժողովուրդը այնքան խոստապահանջ չը լինէր դէպի նա, եթէ նա այդ կարգով շարունակէր իր գործը: Բայց նա այդ իր առաջին սպանութիւնից յետոյ մի աւազակային խումբ կազմեց և սկսեց յարձակվել ճանապարհորդների վրա և կողպատել: Սըբէրի այդ կողպատանքին ենթակայ էին լինում զլիաւորացիս աւազական հայերը: Սակայն Սըբէրի գլուխ գործոյն (chef-d'oeuvre) է Արդուինի եղեռնագործութիւնը: Անցեալ տարվայ դեկտեմբերի 12-ին չորս արգանուջի աւազականեր Արդուին էին գալիս: Արդուինից հազիւ 8 վերստ հեռու Սըբէր իր խմբով որ ընդամենը 3 հոգուց էր բաղկացած, գլխաւորում է հայերին: Հանապարհորդներին հրամայում է իրանց ամբողջ ունեցածը յանձնել դրանց: Սրանց մէջ մին Յակոբ Աւաքեղեանց, որ մի յանուսըն է քաջ անձ էր, չէ հպարտանում այդ հրամանին և երբ աւազակները հրացանների կողակով սկսել են ձեռնել, Աւաքեղեան բռնում է երկու աւազակներին և տապալում է գետին: Բայց հայերի ընդ վէճը չը կար, իսկ աւազակները պիթոյններով էին զինուորված: Սըբէր մեծ ճգով դուրս է արձուգում Աւաքեղեանի ձեռից և սպարպում է իր հրացանը ճանապարհորդների վրա: Բայց մինչև այն ժամանակ Աւաքեղեան կարողանում է Սըբէրի կշտում կոխել իր դանակն և վիրաւորել նաև նորա ձեռքը: Սըբէրի և իր ընկերաց արձակած գնդակներից Աւաքեղեան և իր ընկեր 20 ամեայ Բօխկեան ընկնում են հնչապառ և մին մահացու վիրաւորվում է: Իսկ չորրորդ ճանապարհորդը պատսպարված լինելով իր ձիու ետեք, ձին դարնում է, իսկ ինքը ազատվում է: Այդ միջոցին վրա է հասնում մի հինգերորդ ճանապարհորդը յանկարծակի, որ տեսնելով այդ անակնկալ եղեռնագործութիւնը՝ սարսափում է և աղբրակ դէմք է առնում աւազակների առաջ: Սըբէր հրամայում է նրան իր վիրաւորված ձեռքը փաթկալի, որ իսկոյն կատարվում է: Աւազակները չեն վերադառնում այս վերջինին, միայն վեր են առնում իրանց համար երեք զոյք նորա ծախու ոտնամաններից:

Ս. Բ. Ն.

հրամայում է ինձ դուրս գալ և կորչել իր մօտից, դէ Աստուծոյ պատիւն է, միմիջ կարելի է նրա ստեղծած մարդուն այսպէս հայցոյել, չի կարելի, հրամանաւոր. եթէ այս բանը չէր պատահել, հիմա լաւ սովորած կը լինէի նկարչութիւնը վարժապետի մօտ, «մասնաւոր» կը կատարվելիքը, հրամանաւոր:

Առանց ցաւակցութեան չէր կարելի լսել նրա կեանքի այս տխուր էպիզոդը. խեղճ նկարիչը գտնվում է երկու միմեանց հակառակ հանդամանքների մէջ, — մի կողմից սէր, ցանկութիւն կատարելագործվելու իր արհեստի մէջ, միւս կողմից չըջապատողների համոզմունքը, որ նա ցնդված է: Ինչու տարվայ 365 օր շարունակ յիմարը, որը ոչինչ ինքնուրոյն մտածողութեան նշույլ չէ ցոյց տալիս, կարող է կենսի ինչպէս վրա պատաւար տեղ բռնել, ինչու տարվայ 365 օրը շարունակ կողպատողը, ուրիշի աշխատանքը ուտողը կարող է հասարակական ստալարի վրա ազատ թալել, իսկ մի խեղճ մարդ, որը ապրում է իր ձեռքի հաշու աշխատանքով, համարվում է ցնդված, ինչ է նա ամսվայ մէջ մի քանի օր չայլ և այլ բաներ է խօսում, թէպէտ և կարողանում է Աստուծոյ պատիւը մի ճանկեղծան այնպէս քաշել, որ խեղճ մարդկանց լսողութեան և լրատողութեան զգալարանները չը վիրաւորվեն:

Հ Ր Ա Ւ Է Ր

Թեմական պատգամաւորի ընտրութեան օրը — ամսոյս 24-ը, մօտեցած լինելով տաքացալք պատուէր թեմակալ Առաջնորդից հրակերելու թիֆլիսի թեմի ժողովուրդը մեծապատիւ երեսփոխաններին ներկայ լինելու նոյն օրը վանաց աւազակեղցում ս. պատարագին, ժամը 11-ին և ապա ներկայանալու նորին սրբազնութեան, ընտրութեան յատկարարած տեղում:

Դիտարկութեան նոյն պարհանների ծանուցվում է

Մոսկովեան

որ ներկայացողները անուններն և ազգանունները ընտրողական թղթերի համեմատ ստուգելուց յետոյ, անմիջապէս կը բաժանվին իւրաքանչիւրին թղթերը՝ նշանակելու վեց անձանց անուններ, որոնցից ապա կարգով ձայնելի առաւելութիւն ունեցող չորս անձինք—նրանց համաձայնութիւնը կանխապէս կը պահանջվի—կը քուէարկվին գաղտնի կերպով Առաւելագոյն բուէ ստացողը կը համարվի պատգամատուր և երկրորդը—փոխատուրը (կանխատու)։

Ահաւասիկ այն պարսկ երեսփոխանները անունները, որոնք հրատարակուած են

Թիֆլիսի

1. Վանաց առաջ եկեղեցւոյ.
 1. Պօղոս Մէլլը-Վարպեղեանց.
 2. Յովսէփ Շիշմանեանց.
 3. Աղէքսանդր Երեցեանց.
 4. Բժիշկ Բագրատ Նաւասարդեան։
2. Մողղայ եկեղեցւոյ.
 1. Արզար Յովհաննէսեանց.
 2. Բժ. Կարապետ Մէլլը-Բէշլարեանց.
 3. Գասպար Նահապետեանց.
 4. Վարդան Կուսիկեանց։
3. Աւետեայ եկեղեցւոյ.
 1. Սենեքերիմ Արծրունի.
 2. Գեորգ Տէր-Աղէքսանդրեանց.
 3. Գարբիէլ Մուրադեանց.
 4. Աւետիք Եղիշեան։
4. Կաթողիկէ ս. Գեորգ եկեղեցւոյ.
 1. Սողոմոն Եղիշարեանց.
 2. Յովակիմ Գեղամեանց.
 3. Ամիրան Մանդրեանց.
 4. Գրիգոր Արէշեանց։
5. Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցւոյ.
 1. Գեորգ Եւանդուկեանց.
 2. Աղէքսանդր Քիշիշեանց.
 3. Աղէքսանդր Մանթաշեանց.
 4. Միքայիլ Թամաշեանց։
6. Սուրբ Նշան եկեղեցւոյ.
 1. Յակոբ Տէր-Յովհաննէսեանց.
 2. Բարսեղ Ղանդուղայեանց.
 3. Գարբիէլ Միրզայեան.
 4. Նիկողայոս Տէր-Յարութիւնեանց։
7. Բեղրեհէմի ս. Աստուածածին եկեղեցւոյ.
 1. Գրիգոր Ծանչեանց.
 2. Յովհաննէս Քաթանեանց.
 3. Յովհաննէս Քիշիշեանց.
 4. Յովսէփ Տէր-Արքայանեանց։
8. Տափի թաղի ս. Գեորգ եկեղեցւոյ.
 1. Պօղոս Ղամբարեանց.
 2. Աղէքսանդր Մէլլը-Ազարեան.
 3. Վահրամ Մուրադեան.
 4. Եփրեմ Մատուրեան։
9. Զրկինեանց ս. Կարապետ եկեղեցւոյ.
 1. Գրիգոր Եղիշարեանց.
 2. Բժիշկ Աւետիք Բարաչեանց.
 3. Նիկողայոս Լեանկոտեանց.
 4. Գրիգոր Ծանչարեանց։
10. Սուրբ Սարգիս եկեղեցւոյ.
 1. Իսահակ Տէր-Սիմեոնեանց.
 2. Վարդան Սուլթանեանց.
 3. Ստեփաննոս Արարատեանց.
 4. Ղազարոս Աղայեան։
11. Հրէշտակապետաց եկեղեցւոյ.
 1. Յովհաննէս Թամաշեանց.
 2. Եսայր Յարութիւնեանց.
 3. Արաթ Ներսէսեանց.
 4. Եսայր Ամիրաղբանց։
12. Քարափի ս. Գեորգ եկեղեցւոյ.
 1. Իսահակ Մէլլը-Բարախանեանց.
 2. Իսահակ Ամիրեանց.
 3. Կարապետ Մատինեանց.
 4. Գեորգ Տէր-Պետրոսեանց։
13. Վերայի Ս. Խաչ եկեղեցւոյ.
 1. Աղէքսանդր Մէլլըեանց.
 2. Գրիգոր Ղորղանեանց.
 3. Միքայիլ Խիշարեանց.
 4. Նիկողայոս Տ-Ղանդուկեանց։
14. Կուկիայ ս. Աստուածածին եկեղ. (Թանդոջեան)
 1. Դաւիթ Ղորղանեանց.
 2. Բժիշկ Յովհաննէս Մարգարեանց.
 3. Յովհաննէս Լիւնեան.
 4. Արաթ Զալալեան։
15. Կուկիայ ս. Աստուածածին Նորաշէն եկեղեցւոյ.
 1. Բարդառար Փիրաղեանց.
 2. Եսայի Աբրահամեանց.
 3. Գրիգոր Գորշեանց.
 4. Սիւսակ Սահակեանց։

16. Զուղորթի ս. Աստուածածին եկեղեցւոյ.
 1. Պօղոս Խովակեանց.
 2. Միքայիլ Ղազարեանց.
 3. Աւետիք Պօպովեանց.
 4. Պետրոս Ծանչեանց։
17. Սուրբ Կարապետ եկեղեցւոյ.
 1. Բախչայ Նիղարեանց.
 2. Ներսէս Մէլլըեանց.
 3. Սարգիս Կուսեանց.
 4. Զարարիս Գրիգորեանց։
18. Ծաղկուց ս. Աստուածածին եկեղեցւոյ.
 1. Բժ. Սաման Մայսուրեանց.
 2. Բագրատ Տէր-Ղազարեանց.
 3. Յակոբ Մէլլըեանց.
 4. Գրիգոր Ղարապետեանց։
19. Սուրբ Մինաս եկեղեցւոյ.
 1. Նազար Արիեանց.
 2. Պօղոս Քաթանեանց.
 3. Ղազար Տէր-Ղազարեանց.
 4. Բագրատ Պօպովեանց։
20. Եղիշարեանց ս. Գեորգ եկեղեցւոյ.
 1. Յովհաննէս Նազարեանց.
 2. Սեդրակ Արարատեանց.
 3. Սարգիս Եղիշարեանց.
 4. Գեորգ Յակոբեանց։
21. Զորարշի ս. Գեորգ եկեղեցւոյ.
 1. Գեորգ Թարսանեանց.
 2. Ստեփաննոս Խոջայեանց.
 3. Խաչատուր Աբաղեանց.
 4. Սարգիս Գորիեանց։
22. Սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ.
 1. Սարգիս Սպանդարեանց.
 2. Աւետիք Խիշարեանց.
 3. Միքայիլ Երանոսեանց.
 4. Աղաթի Մէլլը-Սիվաղեանց։
23. Նաւթուղի ս. Գեորգ եկեղեցւոյ.
 1. Պարտաշէս Մամիկոնեանց.
 2. Յովհաննէս Գորգիշեանց.
 3. Պետրոս Սիմեոնեանց.
 4. Գեորգ Արիեանց։

Պարտաշէս, Գրիգոր Արծրունի—Ասաղաքաբի վիճ. Մնացական Թէմարաղեանց Գանձակի — Զարարիս Տէր-Միսասեանց—Գորշայ Աղէքսանդր Յովհաննէսեանց Գուրգիսի և զիւ. — Յովհաննէս Խանարեանց Լուսայ և զիւրօրէից — Յովհաննէս Տէր-Սարգիսեանց՝ Թէլուսի և զիւ. — Աղէքսանդր Մ.-Մանուկարեանց՝ Ծանչարեանց և զ. — Գրիգոր Տէր-Յարութիւնեանց՝ Կուսի և զիւ. — Գրիգոր Եղիշարեանց՝ Ղազարի Կողբ մասի — Գրիգոր Աղիզեանց Գուշէթի և զիւրօրէից — Պակասում են Ասաղցխայի, Սիւնախի, և Ղազարի երեսփոխանները, որոնց ընտրութեանց մասին պաշտօնական գրքեր տակաւին չեն եկած Առաջնորդարան։

ՆԵՐՍԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԵՐՆԻՍՆԻՅ մեզ գրում են հետեւեալը. «Վյս օրերս Երևանում յանկարծակի վախճանվեցաւ Էջմիածնի սինօզի առեմաղալի Սուքիաս Թաղանտոսեանը։ Հանրապետութեան քաղաքում տարի վառում էր սինօզի առեմաղալի պաշտօնը։ Թաղանտոսեանը Էջմիածնի պատմութեան մէջ բաւականին յայտնի տեղ է բռնում։ Հանրապետական Գեորգ կաթողիկոսի օրերով, կարծես թէ նա իր նախնին փառքից ընկած էր երևում։»

ՎԵՐՆԻՍՆԻՍՆԻՅ մեզ հաղորդում են հետեւեալը. «Մեր ընթերցարանը շատ անկանոն դերութեան մէջ է։ Լրագիրները ստացվում են թէ չէ, տանում են տուն և օրերով պահում, չը նայելով որ նոր լրագիրը ոչ ոք իրաւունք չունի տուն տանելու։ Բայց ցատկին և զարմանալին այն է, որ կարգ խանդավորները, ինչպէս միշտ, նոյնպէս և այս գործում, առաջնակարգ հարուստներն են։»

ԽԱՆԻՉԻՍ գիւղից մեզ գրում են հետեւեալը. «Խանի-չիս գիւղի կողոպուցվելու մասին, ակնաստեանները պատմում են հետեւեալը։ «Անցեալ ամսի 8-ին, կէսօրից յետոյ, մի մեծ խումբ զինուորական թուրք ձիաւորներ, մտնեալ է իւրեալ գիւղից ոչ այնքան հեռու գանձուղ Գարս—Բարձրանջ հայ գիւղին։ Սկզբում հեռուից մի քանի անգամ հրացան են արձակում, և երբ նրանք ընդլիմազու-

թեան չեն հանդիպում, մտնում են ուղղակի գիւղ տեղական երանակով անճոռնի ձայն հանելով։ Գիւղի բնակիչները սարսափածաբար լինելով Աստուած օգնութեանն են դիմում, որ այդ յանդուգն աւազակները խումբը մի կերպ հեռանայ, առանց լինա պատճառելու իրանց գիւղին. մի քանի գիւղացիներ աւազակները սիրտը շահելու համար, հրաւիրում են նրանց, բայց աւազակները չը նորհակալութիւն են յայտնում։ Միայն մի երիտասարդ գիւղացու առաջարկում են, որ իրանց դէպի Խանի-չիս գիւղը առաջնորդէ։ Նրիտասարդը կատարում է նրանց հրամանը։ Յանկարծ այդ գիւղի տանուտէրը հեռուից նկատում է, որ դէպի իրանց գիւղը մի խումբ ձիաւորներ են գալիս։ Հասկանում է, որ այդ անակնկալ հիւրերը չար նպատակով են դիմում դէպի գիւղը, և այդ պատճառով թաքնվում է արտուում։ Աւազակները մտնում են այն ժամանակ, երբ քանանան մի նընջեցեալի վրա կարգ կատարելիս է լինում։ Անյապաղ շրջապատում են հանդիսականներին թուրքական արգելված այն ալ ու հրացանները ձեռքին պատրաստ պահած։ Պահանջում են տանուտէրին, բայց նա չէ յայտնվում, ստիպում են գիւղացիներին որ յայտնեն նրա տեղը և վերջինները երկիւղից ցոյց են տալիս այն ակունք, որտեղ նա թաքնված է լինում։ Աւազակները մի քանիսը ձիաներից իջնում են և մտնում ակունքի գոլորտը։ Այս աւազակները դիմում են գիւղացիներին ասելով թէ չեմք մեր հարկը. նրանք էլ մի-մի բուրբ ժողովելով իրանց մէջ մի փոքր դուռը յանձնում են աւազակապետին։ Գրանալ չը բաւականապէս տանուտէրից պահանջում են ասելի մեծ գումար։ Տանուտէրը խնդրում է որ թող տան իրան տանից պահանջած գումարը բերելու համար, բայց աւազակները չեն համաձայնվում։ Ամենքը իրան ձիաներից վայր են իջնում։ Նախ ննջեցեալի տանը մի փոքր նախաձայնի են անում և մի-մի բաժակ դնել և օղի խմում, ապա սկսում են իրանց կողոպուտը։ Նրանցից մինը վերցնում է վերնը քանանայի ուսերից, դնում է օտրի տակ և արձակեալ կոծակները սրկում։ Մրանից յետոյ տանուտէրը, աւազակները ստիպմամբ, ցոյց է տալիս գիւղի հարուստ մարդկանց աները, ի միջի այլոց և իր տունը։ Աւազակները մի մասը մտնում է դրսում, իսկ միւսները մտնում են աների մէջ և աչքը ընկնող ամեն լաւ իրեղէնները վերցնում, սկսեալ մահճների և վերմակների երեսից, մինչև կանանց վերջին հագուստները։ Պատմում են, որ գիւղացիներին յաջողվում է իրանց կանանց և աղջիկներին անստուգած թաղցնել։ Աւազակները բռնում են իրանց կողոպուտները իրանց հետ բերած աղատ ձիաների վրա և գիւղացիները մինին ձեռնելով ասում են՝ «Գնա շուտով քաղաք և յայտնի իմանով (տեղիս փոխ-գաւառապետ) թող զայ, մենք նրան այս ինչ հանդուժ կը սպասենք»։ Աւազակները, գիւղից վերադառնալու ժամանակ, պատահում են մի գիւղացի հայ կնոջ և մի աղջկան, որոնց տանում են իրանց հետ և առեմաղալուց յետոյ բաց են թողնում։»

Մենք հաստատ աղբիւրից իմացանք, որ Թիֆլիսի հայ վաճառականները 100 հոգի ուղարկել են մի հեռագիր իրանց հարկեր ստորագրութեամբ Կ. Պօլսի Ներսէս պատրիարքին, շնորհակալելով նրան ջրհանքի մեծամասնութեան ստանալը և ցանկութիւն յայտնելով նրան կաթողիկոսական ակթուի վրա տեսնելու։

Լրագիրներում կարգում ենք որ Բօշաշլը հարուստ տան ներկայացուցիչը գալիս և Բագու նաւթային գործի առիթով։

Մարտի 15-ին կատարվեցաւ Թիֆլիսում գեներալ Ստարոսելսկու թաղման հանդէսը։ Բագու-թիւ հասարակութիւնը ուղեկցում էր հանգուցեալի դագաղին դէպի ուս Սեմինարիայի եկեղեցին, բազմաթիւ պատկեր տանում էին այլ և այլ հասարակութիւնների և դպրոցների ներկայացուցիչները։ Հանգուցեալին տարան իր գիւղը, Սաղուրամ թաղելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հլախայի հեռագրական գործակալութիւնը հաղորդում է հետեւեալը. «Կարծում են, որ Ֆրան-

սիան կը պահանջի Չինաստանից վեց միլիոն ֆունտ ստէրլինգ վարձատրութիւն նրա մասնակցութեան համար Տոնկինի գործերում։ Լուր է տարածված, որ ծովապետ Կուրբէին հրամայված է գրաւել Խաչնան կղզին։

«Journal de Rome» լրագիրը կարծում է, որ Գերմանիայի հետ Ռուսաստանի մտերմանալու առաջին հետեանքը այն կը լինի, որ երկու կայսերութիւնները կը սառչեն դէպի Անգլիան։ «Kölnische Zeitung» գերմանական պաշտօնական օրգանը նկատում է, որ Անգլիան ընդ միշտ հրաժարվեց աներկիւղ պետութեան իր տիրապից։ Ամին անգամ, հէնց որ նրա շահերին վտանգ է սպառնում, նա սկսում է դողալ։ «Journal de Rome» լրագիրը նկատում է, որ Բերլինի և Ս. Պետերբուրգի կառավարութիւնները Մեծ-Բրիտանիային հակակրում են այն պատճառով, որ այդ պետութիւնը անիշխանականների բուն է դարձած։

ԽԱՆՆ ԼՈՒՐԵՐ

Պարահան դէս գծանոցում Անցեալ բարեկեցանքին Վիեննայի գծանոցում հիւանդների համար պարահանդէս տրվեցաւ։ «Fremdenblatt» լրագրի աշխատակիցներից մէկը ներկայ էր այդ երեկոյթին և պատմում է, որ ծանր տպաբուրութեան տակ էր ընկնում մարդ հէնց բալլը մտնելու օրովից։ Այդի խոջըրում գանձված մաշկ շինութիւնը, վանդակապատ պատուհանների, ամբողջապէս լուսաւորված էր։ Նախասենեակում բազմաթիւ ծառաները և հիւանդապահ կանայք ուղղակի հասկացնել էին տալիս, որ պարահանդէսը սովորական առողջ մարդոց համար չէ։ Առաջին փորձի սենեակում բարձրութեան վրա նստած են երեք կրօնիչները դէպի մեռած և անմիտ արտայայտութեամբ, մէլը անում է գիթուի վրա, միւսը ջութակի վրա և երկրորդ մի այլ գործիքի վրա։ Նրանք անում են երգեր և պարեր, անում են կանոնով, բայց տպաբուրութեանը ուրախ չէ լինում, և նրանց շրջապատող ունիւնդիւրները ևս նման են ստուած մաւրաներին։ Հիւրերը մտնում են ընդարձակ, զարդարված և սպիտակ լուսաւորված պարահանդէսը դահլիճը լինել է հասարակութեամբ։ Ներկայ կողոպուտը համարեա չեն խօսում կամ ցածր ձայնով են խօսում։ Պարում են գանազան պարեր կարգով և պարելիս չեն սխալվում։ Թիլիսի թուրք վրա նընտած է պայծառ կարմիր շորով մի ֆահլի կին, ինչպէս երևում է լաւ հասարակութիւնից, որը այժմ նրա մասին երեք մոռացել է։ Նրա կողքին նստած է մի երիտասարդ մարդ, դերձակի օգնականի տիպով. նա իրան Աստուծոյ որդի է անուանում. միւս կողմից մի կարճահասակ պարոն ծաղրական հայեացքով նայում է իր շուրջը. նա գիտէ, որ մարդիկ նրան մարդ են համարում, այն ինչ, ինչպէս իրան շատ լաւ յայտնի է, որ ինքն ոչ թէ մարդ է, այլ շոքրոտանի մի կենդանի (կենդանու)։ Հիւրերին ման անող գծանոցի զըլխաւորը նկատեց. «Այստեղ թաղաւորում է ճըլմարիտ հասարակութիւնը։ Նրան մտեցաւ 25 տարեկան մի դեղեցիկ և ճարպիկ երիտասարդ մարդ և կամաց ասեց նրան, չինչի ինձ համազետ չուղարկեցիք. ինձ չեն ճանաչում և պատշաճաւոր յարգանք չեն ցոյց տալիս ինձ։ Այդ խօսքերից յետոյ նա քաղաքակրթութեամբ մեկնեց ձեռքը իր պարենկերուհի տիկնոջը և կանգնեց պարոնների շարքում։ «Ի՜նչ ո՞վ է, հարցրին զըլխաւորից։— «Գծանոցի կայսրն է», ժպտաւով պատասխանեց ծերունին։ Այդ ժամանակ մտեցաւ հիւրերին մի կարճահասակ ծերունի և տուեց մի թղթի կտոր։ «Ի՜նչ իսկապէս ինչ էք կամենում, հարցրեց նրան գծանոցի զըլխաւորը, կարգաւով այդ անմիտ գրուածքը։— «Նս կամենում, որ դուք պարալիստին ներկայացնէք այդ հանրագիրը, որի մէջ ես սնդուում եմ, որ անհրաժեշտ է առանձին օրէնք սահմանել վեղատարիանի վրա։ Մի քանի ժամանակից յետոյ հիւանդները գնացին ընթերցու. յետոյ վերադարձան սրբը շարունակելու համար։ Արդէն կէս դիւրից անց էր, գրում է թղթակիցը, մենք սկսեցինք տուն գնալ, բայց դահլիճում դու լըսվում էին կրօնիչներին հնչունները և պարերը շարունակվում էին։»

Խմբագիր-հրատարակող ԳԻՒՂՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

2,000 ամենից ՀՈՉԱԿԱՅԹ բժշկանք միջոցով են և խորհուրդ են տալիս

ԴԿ ՊՕՊՊԻ ԳՏԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՆԱՏԵՐԻՆԵԱՆ ԲԵՐԱՆ ՈՂՁՂԵԼՈՒ ԶՈՒՐ

Առարկական պաշտոնական ատամնաբույժի, ոչնչացնում է ատամնացալքը, բժշկում է հիւանդ ընդերքը, պահպանում և մաքրում է ատամները, սննդացնում է վատ հոտը, թեթևացնում է մանուկների ատամները բուժանելով, պահպանող միջոց է գիՖտէրիտի դէմ, անհրաժեշտ է հանքային ջրեր գործածելու ժամանակ, մի շիշը արժէ 1 ր. 50 կ., կէս շիշը 1 ր. և 1/3 շիշը 60 կոպէկ:

Ատամնային փոշի խոտերից, արդէն կարճատե գործածութիւնից յետոյ ատամները կատարելապէս սպիտակացնում է, չը փչացնելով նրանց: Խրաքանչիւր կարողակցի դիւր 70 կ.: Ատամնային օժանելի պատտա ապակէ կարծրանում 1 ր. 20 կոպ., փորձված միջոց է ատամները մաքրելու համար: Ատամի անուշահոտ պատտա բերանի ներքին մասը և ատամները առողջ պահպանելու համար, մի կտորը արժէ 35 կոպ.: Ատամային պլումբա ամենաողող միջոցը դատարկ ատամները անձնապէս պլումբելու համար: Փորթիկ կարծր կայի դիւր է 2 րուր:

ՊՕՊՊԻ ԽՈՏԻ ՍԱՊՈՆ

Մարտի 1-ին բացվում է ԳԵՂԱՐՈՆԵՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԶԱՆԴԵՍ

ՄԵՏԱՔԱՅԻՆ ԲՕԺՕԺՆԵՐԻ ՍԵՐՄԵՐ

Գեղին կոկոնների տեսակից, պատրաստված է Պատտէօրի սխտեմայով և ստացված է Ֆրանսիական առաջնակարգ ֆիրմաներից: Մտկալի դիւր մի րուրէի է: Կան նոյնպէս Նուսու տեսակից պատրաստված սերմեր— մտկալը 50 կոպէկով: Գիմել հետեւեալ հասցեով: Պ. Լէրիսէին, Ֆրէյլինկայա փողոց, № 8, տուն Արտադրի, կամ Լուի մագազինում: 2—5

Պ. ԽՄԷԼԷՎՍԿԻ, որ վերջացրել է իր լիակատար ուսումը վարչապալայի կոնսերվատորիայում և Մոսկուի աշակետ է մուգրիկայի դասեր է տալիս դաշնամուրի և ֆիդէլայի վրա, նոյնպէս դաս է տալիս մուգրիկայի տեսութիւնը, դարմանի (գեներալ բաս): Բնակվում է կաթողիկական և կեղեցու տանը Կուկիայում: 4—6

ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒՆՆԻՑ

Հիւանդները ամեն օր ընդունում են Առաւօտեան՝ 9—12 1/2 ժամ, ՆԱՍՍԱՐԳԵԱՆ—վերաբուժական, վնասական և ատամի ցաւերի: 10—10 1/2 ժ. ԲՈՒԳՎՈՎՍԿԻ—մանկական և ներքին ցաւերի: 10 1/2—12 1/2 ժ. կին—բժիշկ ՇՄԻՏԻ—կանանց, ներքին և աչքի ցաւերի: 10—11 ժ. (կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ) ԲԷՅՆ—աչքացաւի: 11 1/2—12 1/2 ժ. (երկուշաբթի), ԲԱՐԱՅԵԱՆ—ներքին և ջղային ցաւերի: Երեկոյեան՝ 5 1/2—6 1/2 ժ.—ՆԱՍՍԱՐԳԵԱՆ—ամեն օր: ԲԱՐԱՅԵԱՆ և ԲՈՒԳՎՈՎՍԿԻ—չորեքշաբթի և շաբաթ: Համախորհուրդ (հիւանդանոցի բոլոր բժիշկները)—չորեքշաբթի և շաբաթ—6 1/2—7 1/2 ժամը երեկոյեան: Հիւանդանոցը ունի սենսիւններ հիւանդների և ծննդիանների համար, երթեւեկ հիւանդները վճարում են խորհրդի համար 50 կ.: Հիւանդանոցի բոլոր բժիշկների համարժեքի (կոնսիլիում) համար 3 մանէթ: Չքաւորները անվճար: Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱՍՍԱՐԳԵԱՆ:

ՆԱԽԱԶԳՈՒԶԱՅՈՒՄՆ

Կարճեալ սկեցին կեղծել մեր գործարանի արդիւնագործութեանց էտիկետները, ուստի զգուշացնում ենք լաւ և համով ծխախոտ սիրողներին ծխախոտ առնելիս ուշ դարձնել մեր իսկական ֆիրմայի վրա "Турецкоподданныхъ бр. Саид-Оглы", և համեմատել մեր արդիւնագործած ծխախոտէրը միւս գործարանների արտադրութեանց հետ: Մխախտի գործ. "Եղբ. Սալի-Օղլի": 2—4

НА ЛЪТНИЙ СЕЗОНЪ МОДНЫЕ

ПОСЛЕДНЫХЪ ФАСОНОВЪ ДАМСКІЯ, МУЖСКІЯ И ДЪТСКІЯ ШЛЯПЫ И ДРУГІЕ МОДНЫЕ ТОВАРЫ ВЪ СКЛАДЪ ЗАГРАНИЧНЫХЪ МОДНЫХЪ ТОВАРОВЪ ГУЛАСПОВА

на Дворцовой улицѣ, домъ Цовьянова и Сараджева, во „дворѣ“, рядомъ съ магазиномъ Варшавской обуви Гиргидова, ходъ-же во дворѣ, рядомъ съ кондитерской РЕЦЬЕ. БОЛЬШОЙ ВЫБОРЪ ДАМСКИХЪ, МУЖСКИХЪ И ДЪТСКИХЪ СОЛОМЕННЫХЪ ШЛЯПЪ съ отдѣлкою и безъ отдѣлки. ТОРГОВЛЯ ОПТОМЪ И РОЗНИЧНО. ВСѢ ТОВАРЫ НАХОДЯЩЕСЯ ВЪ МОЕМЪ СКЛАДѢ продаются ДЕШЕВЛЕ ПРОТИВЪ ДРУГИХЪ КОММЕРСАНТОВЪ. Складъ открытъ ежедневно отъ 7-ми часовъ утра до 11 часовъ вечера. Гуласовъ. 3—5

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Զ Ի Ն Ք Ե Ր Ն Ի Ի Ր Կ Ի Մ Է Զ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷԶ:

Ծախում է ամենալաւ համարված կարեմքեաններ նպաստող նոր գործիքներով և նոր պատուանդաններով, որոնք պահպանում են փչանալուց, գործելու ժամանակ աղմուկ չեն հանում և թեթեւ ընթացք ունեն աշխատանքի ժամանակ, այնպէս որ ամենաթոյլ և ծեր մարդիկ կարող են նրանց կառավարել առանց ոյժերը սպառելու: Ծախվում է

ԿԷՍ ՄԻԼԻՅՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱԻԵԼԻ ՏԱՐՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Այս իրողութիւնը ամենալաւ ապացոյց է Ձեր գրեթէ կարեմքեանների համար:

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ. Ձեր գրեթէ իսկական կարեմքեանները մեծ վարկ ունեն, որովհետեւ իրանց գեղեցիկ յատկութիւններով ամենքին զմայլեցնում են և այդ պատճառով ուրիշ գու՛ առանձին նրանց կեղծում են և ծախում են Ձեր գրեթէ իսկական կարեմքեանների տեղը: Զգուշացնում ենք ձեզ, որ Ձեր գրեթէ իսկական իւրաքանչիւր կարեմքեան The Singer Manufacturing Co-՞ ֆիրմայից ունի գործարանի զրօշմներ մեքենայի կոթի և մամուլի վրա, The Singer Manufacturing Co-՞

Գ. Ն. Յ. Գ. Լ. Ի. Ն. Գ. Ե. Բ. Թ. Գ. Լ. Ի. Ս. Գ. Լ. Ի. Ս. Կ. Ի. Մ. Է. Զ. Փ. Ո. Գ. Ն. Ս. Կ. Ի. Մ. Է. Զ.

ԲԱՌՈՒՄԻ մէջ Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-Օղլի:
ԳՈՒՍՅԻՍԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Շենյուրի:
ԲԱԳՈՒԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Միրզա-Աւագովի:
Խրաքանչիւրին միջոց տալու համար ձեռք բերել Ձեր գրեթէ ամենաօգտակար և իսկական կարեմքեան կարելի է գնել փոքր մուտքերով, այսինքն շաբաթական 1 ր. 50 կ. վճարելով առանց իսկական դիւր բարձրացնելու: Հնացած մեքենաները խանութը փոփոխում է: 42—50 (1)